

ԼԵՀՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ

ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ^(*)

Առաջին և ամենակարևոր հարցը որ ներկայանում է մեզ հայերէն բարբառների մասին, այն է թէ ե՛րբ է տեղի ունեցել նրանց ծագումը:

Երկու կարծիք կայ այս մասին. — ոմանք կարծում են թէ հայ բարբառները ժամանակակից և կամ նոյն իսկ աւելի հին են գրաբարից, հետեաբար և նրանից անկախ են. ուրիշներ կարծում են թէ հայ բարբառները գրաբարի շարունակութիւնն են և հետեաբար նրանից աւելի ուշ են ձևացած: Երկու կարծիքները ձևակերպելով մի ուրիշ ձևով, կարելի է ասել որ ըստ առաջինների Ե. դարում կային մի խումբ հայերէն բարբառներ, որոնք ապրում էին իրար հետ կողք կողքի և որոնցից մէկը միայն բարձրացաւ գրականութեան և կոչուեց գրաբար. միւս բարբառները թէև նրան ժամանակակից, բայց մընացին միայն ժողովուրդի մէջ՝ իբրև խօսակցական լեզու, և նրանց շարունակութիւնն են կազմում արդի բարբառները: Երկրորդ կարծիքին հետևողները Ե. դարում առանձին բարբառների գոյութիւնը չեն ընդունում, և հետեաբար նոր բարբառները հին բարբառների շարունակութիւնը չեն համարում:

Ի՞նչ պատճառաբանութիւններ ունին առաջին կարծիքին հետևողները. — նախ՝ այն ընդհանուր սկզբունքը, որ ոչ մի լեզու միօրինակ չէ, և չկայ լեզու՝ որ բարբառներ չունենայ: Հայերէնը՝ որ խօսւում է մի լեռնոտ երկրի մէջ, իրարից անջատ մեծամեծ նահանգներում և գաւառներում, պէտք է որ անպատճառ բարբառներ ունեցած լինէր. երկրորդ՝ հին քերականների տուած յայտնի վկայութիւնները մի խումբ հայ բարբառների գոյութեան մասին: Եր-

րորդ՝ մի քանի բառական ձևեր, որոնք ըստ իրենց կազմութեան աւելի հին են քան գրաբարի ծանօթ ձևերը:

Մենք վերը, գլուխ ԺԸ. խօսեցինք Ե. դարի հայերէն բարբառների մասին և մանրամասն չօջափեցինք առաջին երկու պատճառաբանութիւնները: Համաձայն ընդհանուր սկզբունքին, մենք ընդունեցինք Ե. դարում հայ բարբառների գոյութիւնը, բայց ցոյց տուինք միաժամանակ որ այդ բարբառները իրարից ազդու կերպով դանաղանուած չէին եւ կարելի էր նրանք աւելի ենթադրաբար կոչել քան բարբառ: Օրինակ բերինք նաև այսօրուայ թուրքերէնը որ Պարսկաստանի կէսերքից (Ղազվինից) սկսած մինչև Ադրիականի ափերը, այն է Հայաստանից չորս անգամ աւելի ընդարձակ տարածութեան մէջ չի ներկայացնում իրարից այնպէս ազդու կերպով անջատուած բարբառներ, ինչպէս ենթադրւում է որ պիտի լինէր համաձայն ընդհանուր սկզբունքի: Երկրորդ՝ գտանք որ քերականների վկայութիւնները վերաբերւում են ոչ թէ հայերէն բարբառներին, այլ Հայաստանի մէջ բնակող օտար մանր ազգերի լեզուներին:

Մեր ապացոյցները այս երկու կէտերի մասին, բնականաբար կրում էին աւելի պատմական ու բանասիրական բնոյթ. այժմ անցնում ենք զուտ լեզուաբանական ապացոյցներին, ինչպէս պահանջում է երրորդ պատճառաբանութեան բնոյթը:

Որպէսզի Ե. դարում զանազան բարբառներ գոյութիւն ունեցած լինէին, եւ արդի բարբառները գրաբարից տարբեր հիմք ունեցած լինէին կամ մինչև անգամ աւելի հին եղած լինէին քան գրաբարը, պէտք է որ ներկայացնէին այնպիսի բառական ձևեր, որոնք ձայնաբանօրէն կարող չլինէին յառաջանալ գրաբարի ձևերից եւ աւելի հին լինէին քան գրաբարի ձևերը:

Գրաբարի ամենահին ձևը հնդեւրոպական նախալեզուն է, որ և հայերէն լեզուի ելակէտն է: Բնականաբար մեր համեմատութիւնները պիտի կատարենք ուղղակի նրա հետ. եթէ բարբառները կարողանան տալ մի այնպիսի ձև, որ բռնի՝ հնդեւրոպական նախալեզուի և գրաբարի միջին տեղը, իրօք որ դա կը լինի գրաբարից աւելի հին մի ձև:

(*) Վերցուած՝ մեծաճում հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ին. գլուխ):

Բացի հնդեւրոպական նախալեզուից, կարող են մեզ իբրեւ համեմատութեան եզր ծառայել շատ անգամ նաեւ այն լեզուները, որոնցից բառեր են փոխ առնուած հայերէնի մէջ և որոնք գոյութիւն ունին թէ՛ գրաբարի և թէ՛ բարբառների մէջ: Եթէ բարբառները փոխառեալ բառերի համար ներկայացնեն մի ձև որ աւելի մօտ է փոխատու լեզուի ձևին քան գրաբարը, նըշանակում է թէ՛ նա աւելի հին է քան գրաբարը:

Մեր քննութեան մէջ առաջին տեղը տալիս ենք Ագուլիսի բարբառին, ըստ որում նա ամենից աւելի ձևափոխուածն է, և հենց այս բարբառն է յատկապէս որ համարուում է աւելի հին քան գրաբարը. հմմտ. Վանցեան, Նախահայերէնի հետքեր զօկերէնում, ՀԱ. 1899, էջ 147-9 և 1901, էջ 180-181:

Առնենք նախ ձայնաւորները.

ա) Ա ձայնաւորը որոշ պայմաններում Ագուլիսի բարբառում դառնում է օ: Հարց պէտք է տանք. — Ագուլիսի բարբառն է դարձնում օ, թէ՛ այդ օ հնչումը հայերէնի ամենահին վիճակն է, որ հարազատօրէն մնացել է մինչև այժմ այս բարբառում. մինչդեռ գրաբարը Ե. դարից առաջ վերածել է ա, որին և հետեւել են մնացեալ բոլոր բարբառները, բացի անշուշտ Կիլիկիոյ բարբառից, որ նոյնպէս ա դարձնում է օ:

Երևոյթը լեզուաբանօրէն տարօրինակ և անկարելի է, որովհետեւ ինչպէս ա կարող է դառնալ օ, նոյնպէս և օ կարող է դառնալ ա. օր. ռուսերէնի մէջ բոլոր նախաշեշտ օ-երը դառնում են ա, անգլիերէնի մէջ օ ձայնը այժմ շատ տեղ արտասանւում է ա. հմմտ. յատկապէս սեռականի օն մասնիկը, որ հիմայ արտասանւում է աֆ:

Ստուգելու համար թէ՛ ա և օ ձևերից ո՛րն է աւելի հնագոյնը, մենք իբր միակ ուղիղ միջոց ունինք բառի ստուգաբանութիւնը, յատկապէս փոխառեալ բառերի մայր ձևի համեմատութիւնը: Այսպէս՝

արջ — օռջ — յն. արկտոս, զնդ. արշա
գաղ — գեօղ — պրս. գաղ
գաղար — գէօղար — պրս. գաղար
գաճ — գէօճ — պհլ. գաճ, պաղ. գաճ
գափ — գէօֆ — պրս. գաֆ
գժուար — գըժէօր — պրս. գուշվար

դիւան — դիվուն — պհլ. դեւան, պրս. դիւան
դմակ — դըմօկ — պհլ. դումակ, զնդ. դումա,
օսմ. դումագ

թանկ — թունդ — պհլ. պրս. թանգ

թաս — թօս — արաբ. թաս

ծրար — ծրօր — ասոր. ցըրար

հաղար — հըզէօր — պհլ. պրս. հաղար

ճաշ — ճօշ — պհլ. պրս. չաշտ, չաշ

ճար — ճօր — պհլ. պրս. չար

ճրադ — ճրօյգ — պրս. չիրադ

մախաթ — մխօթ — ասոր. մըխաթթա

մաշ — մօշ — պրս. մաշ, սանս. մաշտ

մկրատ — մկրօտ — արաբ. միքրադ

նազ — նօզ — պրս. նազ

նշան — նշուն — պհլ. պրս. նիշան

շամամ — շամում — արաբ. շամմամ

պատինջան — պատընջուն — արաբ. բա-
զինջան

պսակ — փսօկ — պհլ. փուսակ, զնդ. փուսա

վարդ — վէօդ — զնդ. վարըզա, ասոր.
վարդա

վարս — վէօրս — պհլ. վարս, զնդ. վարըսա

վկայ — վկօ — զնդ. վիքայա

տաշտ — տօշտ — պհլ. պրս. աֆդ. [թաշթ,
զնդ. [թաշթա

տղայ — տղօ — ասոր. [թալիա

Եթէ այս բոլոր բառերը հին հայերէնի մէջ ունին ա, որ համեմատուած լեզուների մէջ նոյնպէս ա է, իսկ Ագուլիսի բարբառում օ կամ նոյնից առաջացած եօ, ու, նշանակում է թէ՛ գրաբարի ձևերը հնագոյն-ներն են, իսկ Ագուլիսի ձևերը յառաջացած աւելի ուշ:

բ) Գրաբարի ե ձայնաւորը դէմ Ագուլիսում մեծ մասամբ գտնում ենք ի. ո՛րն է սրանցից հնագոյնը — Այս մասին իրանեան լեզուների համեմատութիւնը շատ ակներեւ փաստեր չի տալիս մեզ. բայց մենք կարող ենք գիմել ուրիշ լեզուների համեմատութեան. այսպէս՝

աղուէս — աղվիս — յն. ալուպէկս

բերել — բիրիլ — հնիւ. բհեր. յն. ֆերո

դետ — գիտ — հնիւ. վեդ, վոդ, ուդ. բայց ոչ

մի լեզուի մէջ էլ չկայ ի ձայնաւորով ձև:

ես — իս — յն. եգո, լտ. եգո, հիսլ.

եկ, հնիւ. եգո, աւելի նոր լեզուների մէջ

կայ ի ձևը. ինչ. գերմ. իիս. ևայլն

եփ — իփ — յն. հեփսո, արմատը

հնիւ. եփս

մեծ — միծ — հնիս. մեզա արմատից. հմմտ. յն. մեզաս. աւելի նոր լեզուներում կայ ի ձևը. ինչ. գոթ. միքլիս, պրս. միհ:

Այստեղ էլ ուրեմն հնութիւնը պատկանում է գրաբարին և ոչ թէ Ագուլիսի բարբառին:

զ) Գրաբարի ու ձայնաւորի գէմ գըտնում ենք շատ անգամ Էօ, ու, համեմատուած ձևերը տալիս են մեզ օ և ոչ թէ ուրիշ ձայնաւոր. ինչ.

փոս — փուս — յն. ֆոսսա

բոց — բիւց — հնիս. բհս, յն. ֆոս

զ) Գրաբարի ու ձայնաւորի գէմ Ագուլիսի բարբառը շատ յաճախ հանում է օ (ծ-ից առաջ է). համեմատելով ուրիշ լեզուներին հետ, գտնում ենք որ հին և հարավատ ձևն է ու և ոչ թէ օ. ինչ.

կուպր — կօպր — ասոր. արամ. քուֆրա, ասուր. քուփրու, արաբ. քուֆր

թութ — թօթ — արամ. թուփա, այսպէս և բոլոր լեզուները՝ ու

կուժ — կէժ — հպրս. քուժա, պրս. քուզա

ե) Գրաբարի ի ձայնի գէմ Ագուլիսի բարբառը շատ տեղ ունի իր շատ հետաքրքրական այ ձևը. մեր համեմատութիւնը օտար ձևերին հետ այստեղ էլ ցոյց է տալիս որ հնագոյնն է՝ ի և ոչ թէ ուրիշ ձայնաւոր. ինչ. կիր — կայր — երբ. արամ. զիր, արաբ. ջիր. կայ արգարե եթովպ. գայար, բայց պարզ է որ չի կարող նա մեզ հետ համեմատութեան գրուիլ.

ինն — այնը, ծագում է հնիս. ենն արմատից, որ մեր բառի ի ձայնաւորը յայտնի կերպով չի ցոյց տալիս, բայց նոյն իսկ Ագուլիսի իննսուն ձևը հաստատում է որ արմատն է ինն. հայերէնի օրէնքով ե գտնում է ի՝ յաջորդ ռեզականի մօտ, որով հնիս. ենն կանոնաւոր կերպով լինում է ինն:

զ) Զայնաւորների միւս փոփոխութիւնները, երկրաբառների սղումը համեմատելով ուրիշ լեզուների հետ՝ գտնում ենք նոյնպէս որ նոր յառաջացած երեւոյթներ են. ինչ.

ալեւր — ալլւր — յն. ալեւրոն. գը-

րաբարը ունի մի բաղաձայն ի, ինչպէս եւ յունարէնը, մինչդեռ Ագուլիսի բարբառը կրկնել է. նոյնպէս պէլ. եւ ճիշտ համապատասխանում է յն. եւ երկրաբառին, որ Ագուլիսի մէջ միայն մի պարզ ձայնաւոր է գարձել. յետին սղման արդիւնք.

գագաթն — գչէագչաթ — բարել. գագադու, ասուր. քաքադու, երբ. քազքոդ. բոլորն էլ առաջին վանկում ունին ա ձայնաւորը, որին համաձայն է հյ. ա. միայն Ագուլիսի բարբառն է որ վերածել է ե:

բամբակ — բիմբակ — պէլ. փամպակ, պրս. փանբա, այսպէս նաեւ բոլոր իրանեան և այլ լեզուները. միայն Ագուլիսի բարբառն է որ առաջին վանկում հանում է ի:

այրել — իրիլ — զնդ. աթար եւն. հայերէնի ա ձայնաւորը համապատասխան է սրանց ա ձայնաւորին, որին յաջորդող ք վերածուել է ըստ օրինի ի. իսկ Ագուլիսի բարբառը ներկայացնում է ի, որ միայն կարելի է այ երկրաբառի ամփոփմամբ բացատրել:

ե) Զայնաւորների անկումը շեշտից առաջ՝ մի երեւոյթ է, որ անկարելի է բացատրել նոյնիսկ Ագուլիսի բարբառով, եւ գտնում է իր բացատրութիւնը միայն գըրաբարով.

ապսպարել — պսպարիլ — պէլ. ափասփարամ ապաշխարող — բշխարուղ — պէլ. ափախշ աղալ — ըղանիլ — յն. ալեո

կարաւան — կրավան — պէլ. քարավան Ագլ. ունի ծելի, քաղի որոնք պիտի մնային իբր տարօրինակ և անհասկանալի ձևեր, եթէ չլինէին գրաբարի ածելի, աքաղի ձևերը, որոնք ցոյց են տալիս որ նրանց արմատն է ած, աք. մասնիկներ են ելի, աղի:

Ագլ. բժանիլ բայի գէմ բաժին և բեժինի ձևերը պիտի մնային անբարոյնելի, եթէ չլինէր գրաբար բաժանել, որ ցոյց է տալիս թէ արմատն է բաժ — զնդ. բաժար, սանս. բաշ, որոնց ա ձայնաւորը ընկել է Ագուլիսում:

ը) Բաղաձայնների մասին հարկ չի մնում երկար խօսելու, որովհետեւ Ագուլիսի բարբառը այս կողմից դժուարութիւններ չի հանում, գրեթէ միշտ համապատասխան մնալով գրաբարին: Գլխաւոր տարբերութիւնը իս-ն ձայնափոխութիւնն է, որ նոյն-

պէս նոր երեւոյթ է և չի արդարանում միւս լեզուներով. ինչ.

սոխ — սուհ — պրս. սոխ

մարախ — մարահ — զնդ. մաղախա, պրս. մալախ, աֆխ. մալախ. ոչ մէկի մէջ չկայ ն ձայնը, բոլորն էլ գրաբարի պէս ունին իս

խրատ — հրատ — պհլ. խրատ, պրս. խիրադ
ճախարակ — ճհարակ — զնդ. չախրա, պրս. ախոռ — ահուռ — պրս. ախուր [չարխ

բ) Զանազան բաղաձայնների յաւելումներն, անկումն ու տեղափոխութիւնը նոյնպէս չի արդարանում օտար լեզուների համեմատութեամբ. ինչ.

համարել — հմբարիլ — պհլ. պրս. համար. չկայ բ

պանիր — պանդիր — պրս. փանիր. միայն զնչուները և Ատրպատականի թուրքերն ունին փնդիր.

թոնիր — թարան — ասուր. թինուրու. ունի նախ ն, յետոյ բ, ինչպէս են նաև բոլոր միւս սեմական լեզուները. միայն վրացին ունի թորնե, որ յետին է

արժան — էժան — պհլ. արժան, պրս. արզան. երկուսն էլ ցոյց են տալիս որ բ եղել է և յետոյ ընկել:

արմաւ — ամբրաւ — պրս. խուրմա, ցոյց է տալիս հայերէնի պէս բմ. տեղափոխութիւնը և շրթնականի յաւելումը յետին երեւոյթ է:

Ազուլիսի բարբառը ինքը չի կարող բացատրել օրինակ խղժմտանք, դիւս, գյառնուկ, բլանիք, բարաղնը, ըխպախուտ եայլն ձևերը և կարօտ է հնադոյն խղժմտանք, դուրս, գորտնուկ, բանալիք, բաղեղն, աղբախոտ բառերին, որոնք եւ իրենց կարգին ծագում են խիղճ, դուռն, գորտ, բանալ, բաղ (կից), աղբ արմատներից: Ազուլիսի բարբառն էլ ճանաչում է այս արմատներից մի քանիսը (ինչ. խէղճ, դուրք, բանիլ), բայց իր միջոցներով կարող չէ կապել նրանք իրար հետ:

Այս բոլոր օրինակները, որոնց թիւը դեռ կարելի էր շատ շատացնել, ցոյց են տալիս թէ Ազուլիսի ներկայացրած ձևերը աւելի նոր են և գրաբարն է իրօք նրանց նախաձևը:

Ազուլիսի բարբառից յետոյ քննութեան առնենք Ղարաբաղի բարբառը եւ յատկա-

պէս նրա այն առանձնայատկութիւնը, որի համեմատ գրաբարի բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնների դէմ գտնում ենք կանոնադրապէս պ, կ, տ, ծ, ճ՝ թէ՛ բնիկ և թէ՛ փոխառեալ հայերէն բառերի մէջ. օր.

բերել — հնխ. բհեր — Ղրբ. պիրիլ
բրինձ — պրս. բիրինջ — Ղրբ. պրինձ
ձեռն — հնխ. գհերս — Ղրբ. ծէռք
ծիւն — հնխ. գհիյում — Ղրբ. ծիւն
ջերմ — հնխ. գիւհերմո — Ղրբ. ճերմել
ջուխտ — պհլ. ջուխթ — Ղրբ. ճօխտ
դարբին — հնխ. դհաբհրո — Ղրբ. տարպին
դարման — պհլ. դարման — Ղրբ. տէրման
զաղար — պրս. զաղար — Ղրբ. կէզար
զամէշ — պհլ. գաւմէշ — Ղրբ. կյումաշ

Եթէ այս բառերի մէջ գրաբարն ունի բ, գ, դ, ձ, ջ որոնք համապատասխան են գալիս միւս լեզուների բ, գ, դ . . . ձայներին, մինչդեռ Ղարաբաղի բարբառը (այսպէս նաև Շամախիի, Վանի, Մարագալի, Ոոյի եւ Սալմաստի բարբառները) ունի պ, կ, տ, ծ, ճ, որոնք չեն համապատասխանում համեմատեալ ձևերին, ուրեմն գրաբարն է հին եւ հարազատ, իսկ Ղարաբաղի բարբառը (և միւսները) յետոյ ձևացած:

Եթէ վերոյիշեալ բարբառների մէջ պ, կ, տ, ծ, ճ հնչիւնները գրաբարից աւելի յետոյ են ձևացած, կան մի խումբ ուրիշ բարբառներ (Պարբիդ, Երզնկա, Սեբաստիա, Կիլիկիա, Նոր Նախիջևան, Սուջաւա եայլն), որոնք ընդհակառակը գրաբարի պ, կ, տ, ծ, ճ հնչիւնների տեղ դնում են բ, գ, դ, ձ, ջ: Այս է արեւմտահայ կոչուած արտասանութիւնը: Օրինակ՝ պատկեր, տասը, տուն, կին, կարմիր եայլն որոնք ըստ Մեսրոպեան հնչման (եւ ըստ արեւելեան գրականին) արտասանուում են պ, տ, կ . . . ձայներով, իսկ ըստ արեւմտեանին արտասանուում են բաղգեր, դասը, գուն, գին, դարմիր եայլն: Արդ իրապէս սրանցից այն բառերը, որ ունին բուն հնդեւրոպական ծագում, յառաջանում են բ, գ, դ . . . ձևերից եւ ոչ թէ պ, կ, տ . . . այսպէս՝ տասը — հնխ. դեկմ, տուն — հնխ. գոմ, կին — հնխ. գյեն եայլն: Արեւմտեան արտասանութիւնը ճիշտ ու ճիշտ համապատասխան է հնդեւրոպական հնչումներին,

մինչդեռ զրաբարը՝ ոչ: Ուրեմն արեւմտեան արտասանութիւնը աւելի հին է քան զրաբարը և հետեւաբար արեւմտեան բարբառները աւելի հին են քան զրաբարը:

Սակայն վերի բառերի մէջ կան նաեւ այնպիսի բառեր, որոնք ոչ թէ բնիկ հայերէն են, այսինքն հնդեւրոպական ծագում ունին, այլ փոխառեալ են հարեան լեզուներէ: Այսպէս օրինակ պատկեր և կարմիր: Արդ այս բառերի մայր ձեւերն են պէլ. պատկար, կարմիր, որոնցից երեւում է թէ նոյն պ, կ, տ ձայների բ, գ, դ արտասանութիւնը համապատասխան է մայր ձեւերին, որոնք պահանջում են պ, կ, տ ըստ արեւելեան արտասանութեան:

Ի՞նչ է հետեւում պ, կ, տ... ձայների այս երկդիմի դիրքից արեւմտեան արտասանութեան մէջ: Հետեւում է այն, որ ձայնաշրջութիւնը տեղի է ունեցած երկու անգամ. հնիս. բ, գ, դ... տեւել են նախահայերէնում բ, գ, դ... որ յետոյ Ե. դարում արդէն դարձել էր պ, կ, տ... Այս պ, կ, տ... ձայները երկրորդ անգամ փոխուելով (Ե. դարից յետոյ) դարձել են բ, գ, դ... և այս երկրորդ ձեւն է որ գտնում ենք արեւմտեան արտասանութեան մէջ: Եթէ արեւմտեան արտասանութեան բ, գ, դ... հնչիւնները ներկայացնէին նախահայերէնի բ, գ, դ... հնչիւնները, պէտք էր որ այժմ արեւմտեան արտասանութեան մէջ գտնէինք մի կողմից դասը, դուն, զին, բայց միւս կողմից պատկեր, կարմիր, եւ ոչ թէ բազդեր, գարմիր: Այս բոլորից հետեւում է այն որ նաեւ այս կէտում էլ, ուր արեւմտեան բարբառները զրաբարից աւելի հին լինելու երեւոյթն են ընծայում, զրու-թիւնը նոյն է, այսինքն զրաբարը աւելի հին է, և բարբառները ծագած են նրանից շատ աւելի ուշ:

Եթէ բարբառները զրաբարի աւելի նոր ձեւափոխութիւններն են, պէտք է քննել թէ երբ են ձեւացել նրանք:

Նախ առնենք Ագուլիսի բարբառը՝ վերեւ յիշուած պատճառներով:

Գիտենք թէ Ագուլիսի բարբառի մէջ հայերէն բառերի ա ձայնաւորը դառնում է օ, ու. թուրքերէնից և ռուսերէնից փոխառեալ բառերը չեն ենթարկւում այդ ձայնափոխութեան, բայց պարսկերէն և արաբերէն բառերը բնիկ հայ բառերի նման են:

Թարկւում են: Այս երեւոյթը ստոյգ է ոչ միայն ա ձայնի, այլ և ուրիշ ձայնաւորների համար էլ:

Ստորեւ տալիս ենք այս կարգի փոխառեալ բառերի մի խումբ օրինակներ, իրենց մայր ձեւերով միասին.

ռաստ «պատահիլ» — թրք. ռաստ

թարս «հակառակ» — թրք. թարս

շան «մեղրահաց» — թրք. շան

սաս «ձայն» — թրք. սաս

նազմը «ական» — թրք. նազմը

վազ «պտղաման» — ռուս. վազ

ջուն «հոգեհասկ» — պրս. ջան

բօշ «պարապ» — թրք. բօշ

նոյնը «պայտ» — արաբ. նալ

քյարվան «կարաւան» — պրս. քյարվան

փահմ «հասկացողութիւն» — արաբ. ֆահմ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(ՎԵՐԸ ԵՎԵՐԴԻՆԷ)

ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ՄՏԱԾՄԱՆ ՅՈՒՔԵՐ

Ազգի մը, ժողովուրդի մը, հասարակութեան մը համար, «գէտ օրեր»ը, գրաբարին աւելի ուժեղ բացատրութեամբ՝ «ժամանակի չարք»՝ ապականութեան եւ ընդհանուր ինկածութեան այն ժամանակաշրջաններն են, որոնք ընդհանրապէս հետեւանք կ'ըլլան կրօնական անգամութեան եւ կենցաղական յլիանքի ցոյցի եւ շուայտ սասկոսքիներէն, ինչպէս նաեւ լանխազոյն միակողմանի եւ անմիջ դաստիարակութեան մը աւերներէն ծնունդ առած ապերասան ազատութեան: Երբ անգամ մը ախար վարակի սիրէ սիրս եւ տունէ տուն, մարդիկ այլեւս հանրութեան բարիքն զգացումը կը սուզեն՝ կը մոռնան իրենց անձին պատշաճութիւն մէջ, որ կ'ըլլայ այնուհետեւ իրենց միակ կրօնք՝ որուն իբրեւ ծես կ'ընդունին ընչափազոյնութիւնը, եւ իբրեւ խորհուրդ՝ հիմունք հաւատոյ՝ կոյր ինքնավստահութիւնը: Տարուած այս վերջին մոլորեանէն՝ անոնք ա'լ քամանակ միայն կ'ունենան իրենց խօսքերուն մէջ այլոց նկատմամբ, ապերաստութիւն՝ իրենց ծնողաց հանդէպ, ու ամբարիտ վերաբերմունք ամեն բանի համար՝ որմէ չի կրնար ախորժիլ իրենց խանգարուած խղմմանքը:

«ԱՌԱՔԵԼՈՑ ԵՄԻՆԴՈՎ»